

Սալուտ

Վարչական դեկավար՝ Խաչատրյան Մինաս

Ջեռ 094-39-94-70

Մակերես՝ 5.5կմ²

Բնակչություն՝ 86

salut.shirak@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սալուտ գյուղական համայնքը գտնվում է

Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս արևմտյան մասում:

Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի Սալուտ համայնքը ձևավորվել է 1860թ. Դալբանդ գյուղից գաղթած գաղթականների կողմից:

Համայնքն ունի եկեղեցի, որը կառուցվել է 1860թ:

1988թ. երկրաշարժից հետո համայնքը վերակառուցվել է Ուկրաինիայի Վիննիցայի մարզի շինարարների կողմից:

Համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝

32կմ, շրջկենտրոնից՝ 15 կմ: համայնքի գտնվում է բարձր լեռնային գատում՝ բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2080մ է :

Համայնքի վարչական տարածքը կազմում է 553 հա:

2013թ. հունվարի 1-ի տվյալներով համայնքում բնակվում են 86 մարդ , ունի 19 տնտեսություն, համայնքի բնակչությունը պատկանում է հայ առաքելական լուսավորչական եկեղեցուն: Գյուղը չունի միջնակարգ դպրոց երեխաները մինչև 3-րդ դասարան են հաճախում գյուղի դպրոցը՝ 4-րդ դասարանից հիմնական մասը հաճախում է նույն տարածաշրջանի Մուսայելյանի միջնակարգ դպրոցը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Սալուտ

Բնդեքս՝ 2808